

Փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանը հանդիպեց Ավանի բնակչության հետ

Ավան համայնքում ոռոգման ջրի մատակարարման գործընթացը տեղում ուսումնասիրելու նպատակով մարզպետ Սարգիս Սահակյանի հանձնարարականով օգոստոսի 27-ին Ավան համայնք այցելեց փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանը: Նա հանդիպում ունեցավ տեղի բնակչության հետ եւ լսեց ոռոգման հետ կապված նրանց անհանգստությունները: Ծանոթանալով ջրամատակարարման աշխատանքներին, փոխմարզպետն ասաց,, որ թե՛ Ավանում, եւ թե՛ հարակից համայնքներում այս խնդիրը սրվում է հատկապես ամռան ամիսներին: Նա տեղեկացրեց, որ մարզպետի հանձնարարությամբ հստակ ժամանակացույց է սահմանվել, համաձայն որի, նշված համայնքների ջրամատակարարումը կկատարվի այնմես, որ ջուրը հավասարապես հասնի բոլոր համայնքներին: Նշվեց, որ այս ուղղությամբ հատուկ առաջադրանքներ է ստեղծել նաեւ ջրամատակարարող ընկերությունը:

Հանդիպման ընթացքում բարձրացվեցին նաեւ սեփական եկամուտների հավաքագրման, ինչպես նաեւ նոր ուսումնական տարվա նախապատրաստության հետ կապված հարցեր: